

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 4-ին, ուրբաթ.—Այսօր Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Փետրվարի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը ս. Սարգիս զորավարի տոնի առիթով՝ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» (Սաղմոս ՃԺԵ 15) բնաբանով:

*
* *

Փետրվարի 8-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը տեսչության ղեկավարությամբ եռօրյա ձմեռային շրջապտույտի է մեկնում Աղվերան:

*
* *

Փետրվարի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում հրաժեշտի պատարագ է մատուցում Անթիլիասի կաթողիկոսության միաբան տ. Անուշավան վրդ. Դանիելյանը, որը շուրջ երկու ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Եթէ ոչ ծարաւի իցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

*
* *

Փետրվարի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամասացությունից հետո, կատարվում է Տեառնընդառաջի նախատոնակ և անդաստան Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, հոգևոր ճեմարանի մարզադաշտում, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողների ծափերի տակ Վեհափառ Հայրապետը վառում է Տեառնընդառաջի ավանդական խարույկը: Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը վա-

նական սեղանատանը, օրվա մեծ տոնի առիթով, բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել միաբանության անդամներին, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

*
* *

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառն-ընդառաջ, տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամասացությունից հետո, կատարվում է սուրբ Վարդանանց նախատոնակը՝ նախագահությամբ լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

*
* *

Փետրվարի 20-ին, կիրակի.—Բուն բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առջև, ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը: «Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի առթիվ, քարոզում է տ. Անուշավան վրդ. Դանիելյանը՝ «Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լիցուք գործողին եւ ընդ հրեշտակս երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ» (շարական) բնաբանով:

*
* *

Փետրվարի 24-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, ճեմարանի ուսանողների և միաբանության համար, «Աստվածաշնչյան աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» թեմայով իր երկրորդ դասախոսությունն է կարդում Երևանի պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյանը:

*
* *

Փետրվարի 27-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առջև, ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե 48) բնաբանով: